ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2015թվականի N 16-Ն

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,,Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետի և Բերդի քաղաքապետի միջև 04.05.2015թ. կնքված ,,Դրամաշնորհի տրամադրման,, թիվ 59 պայմանագիրը՝

Համայնքի ավագանին որոշում է

Համայնքի 2015թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 330.0 հազ. դրամ գումարի չափով և սահմանել՝

   ա) բյուջեի եկամտային մասը՝ 229823.65 հազ. դրամ,

   բ) բյուջեի ծախսային մասը՝ 229823.65 հազ. դրամ:

2) Բյուջեի եկամտային մասում ,,Պետական բյուջեից տրամադրվող դրամաշնորհ,, տողն ավելացնել 330.0 հազ. դրամ գումարի չափով՝ համաձայն N1 հավելվածի:

3) Բյուջեի ծախսային մասում ,,Բարեկարգում,, տողն ավելացնել 330.0 հազ. դրամ գումարի չափով՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 1

Բերդ համայնքի
ավագանու 2015 թվականի
հունիսի 30-ի N 16-Ն որոշման

Հ/հ	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	2015թ.Տարեկան պլան /հազ.դրամ/
	ՄԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
1	ՀՈՂԻ ՀԱՐԿ	5500,00
2	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	17500,00
3	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3500,00
4	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3200,00
5	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2200,00
6	ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ	7500,00
7	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ	11000,00
8	ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	6000,00
	ԸՆԴԱՄԵՆԸ	56400,00
	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	
9	ԴՈՏԱՑԻԱ	131396,20
10	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5342,90
11	ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ	4534,50
12	ԸՆթացիկ սուբվենցիա/աշխ.տարբ/	27318,70
13	Պետական բյուջեից տրամադրվող դրամաշնորհ	330,00
	ԸՆԴԱՄԵՆԸ	168922,30
14	ՏԱՐԵԿԱՁԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ	4501,35
15	ՎԱՐՁԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	4020,23
16	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	481,12
	ԱՄԲՈՂՋԸ	229823,65

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 2
Բերդ համայնքի
ավագանու 2015 թվականի
հունիսի 30-ի N 16-Ն որոշման

Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 2015թ.

Հ/հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	Նախատեսված գումարը /հազ.դրամ/
1	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ	65018,6
2	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	42440,0
3	ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ	20322,7
4	ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ	22408,1
5	ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ , ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	57830,0
6	ՍՈՑ ԾԱԽՍԵՐ	500,0
7	ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	3300,0
8	ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ	700,0
9	ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	4761,35
10	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5342,9
11	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	1800,0
12	ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3500,0
13	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	1900,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	229823,65

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2015թվականի N 17-Ա

ՎԱԶ 21074 ՄԱԿՆԻՇԻ 13LL536 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԵՂՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետ Հարություն Մանուչարյանը նշում է, որ Բերդի ԲՈՒԱՏ ԲԲԸ ,,Տաքսի,, ծառայությունը 2008 թվականին Ալինա Մելքումյանից վարձակալել է երկու ՎԱԶ 21074 մակնիշի մարդատար ավտոմեքենաներ և պարտավորվել է կատարել նաև այդ մեքենաների գծով հարկային պարտավորությունները, քանի որ մեքենաների սեփականատերը բացակայում էր Հայաստանի Հանրապետությունից: Ընկերությունը սահմանված ժամկետում քաղաքապետարանին է փոխանցել իր սեփականությունը հանդիսացող մեքենաների գույքահարկի գումարները: Բայց քանի որ ՀՀ ոստիկանության ,,Ճանապարհային ոստիկանություն,, ծառայության Իջևանի հաշվառման- քննական բաժանմունքը Բերդի քաղաքապետարանին չի ներկայացրել Ալինա Մելքումյանին պատկանող ՎԱԶ 21074 մակնիշի մեքենաները հաշվառման վերցնելու մասին տեղեկույթը, այդ մեքենաները չեն մուտքագրվել քաղաքապետարանի գույքահարկի բազայում: 2015թվականին, երբ ,,Տաքսի,, ծառայությունը դադարեցրել է իր գործունեությունը, պարզվել է, որ քաղաքապետարանի գույքահարկի բազայում 2008-2014թթ. չմուտքագրված մեքենաների գույքահարկի գծով առաջացել է 248 հազար 400դրամ չմուծված գումար, որըվրիպելէընկերությանուշադրությունից:

Քաղաքապետ Հարություն Մանուչարյանն առաջարկում է հաշվի առնել, որ ԲՈՒԱՏ բաց բաժնետիրական ընկերությունը Բերդի տարածաշրջանի ուղևորափոխադրումներ կատարող միակ ձեռնարկությունն է, սպասարկում է նաև տարածաշրջանի 7 սահմանապահ գյուղերին, ներկայումս աշխատում է վնասով, գտնվում է ծանր ֆինանսական պայմաններում և կատարել գույքահարկի գեղչ՝ 79 հազար դրամի չափով:

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հաշվի առնելով վերոգրյալը՝

Համայնքի ավագանին որոշում է

2008-2014թթ. քաղաքապետարանի գույքահարկի բազայում չմուտքագրված ՎԱԶ 21074 մակնիշի, 13LL536 պետհամարանիշով ավտոմեքենայի գույքահարկի գծով կատարել գեղչ՝ 79 հազար դրամի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ՀՈՒՆԻՍԻ 2015թվականի N 18-Ա

ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՎԱՐԴԱՆ ԱԴԱՄՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 22 հունիսի 2012 թվականի N 822-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով զինծառայող Վարդան Սերյոժայի Ադամյանի ներկայացրած փաստաթղթերը

Համայնքի ավագանին որոշում է

Զինծառայող Վարդան Սերյոժայի Ադամյանին, հաշվառված Բերդ քաղաքի Մաշտոցի 23/42 հասցեում, հանրային ծառայությունների համարանիշը 3207850103, տրամադրել փոխադրամիջոցի՝ MERCEDES BENZ E 320 մակնիշի թեթև մարդատար ավտոմեքենայի, 70591դրամ գույքահարկից ազատվելու արտոնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆԻՍԻ 2015թվականի N 19-Ա

ՎԱԶ 21013 ՄԱԿՆԻՇԻ 59SL909 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇՈՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԵՂՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բերդ քաղաքի բնակչուհի Երանիկ Սմբատի Մեժլումյանը դիմել է Բերդի քաղաքապետարանի գույքահարկի բազայում իր անունով գրանցված ՎԱԶ 21013 մակնիշի 59SL909 պետհամարանիշով փոխադրամիջոցի գույքահարկը զեղչելու խնդրանքով: Այդ փոխադրամիջոցը 2008թվականին Մեժլումյանն առանց փաստաթղթային ձևակերպումների օտարել է Վերին Կարմիրաղբյուր գյուղի մի բնակչի, ով վթարի է ենթարկել փոխադրամիջոցը, և քանի որ հնարավոր չի եղել այն վերականգնել՝ ապակոմպլեկտավորել է: Փոխադրամիջոցի օտարումից հետո գույքահարկի գծով առաջացել է 74269 դրամ չմուծված գումար: Մեժլումյանը կենսաթոշակառու է և հնարավորություններ չունի գումարը մուծելու:

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հաշվի առնելով, որ ներկայումս այդ փոխադրամիջոցը գոյություն չունի, իսկ գնորդը մահացել է՝

Համայնքի ավագանին որոշում է

ՎԱԶ 21013 մակնիշի, 59SL909 պետհամարանիշով ավտոմեքենայի գույքահարկի գծով կատարել զեղչ՝ 74269 դրամի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ